



Սերգեյ Դովլատով

Կոմպրոմիսներ

Կոմպրոմիս չորրորդ

(«Վեչեռնի Տալին», շոկտեմբեր: 1974թ .) «ԷՍՏՈՆԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Անտառեզրին թխպոտ մի օր

Մի գազան է երեւացել

Մենք ասացինք նրան՝ «Բարով»,

Գազանն ասաց՝ «Տերե»:

Ու նույն պահին լույսի շողը

Ճեղքեց սեւ ամպերի քողը»...

«Վեչեռնի Տալինը» հրատարակվում է ռուսերեն: Եվ ահա հորինել ենք նոր խորագիր՝ «Էստոնական այբբենարան»: Կրտսեր տարիքի ռուս ընթերցողի համար: Առաջին թողարկումը ես պատրաստեցի: Գրեցի տեղ-տեղ սքանչելի ոտանավորներ: Ութ հատ: Ունիվերսալ լրագրողս ներքուստ հպարտանում էի դրանցով:

Չանգում է Կենտկոմի հրահանգիչ Վանյա Տրուլը .

Ո՞վ է գրել այդ շովինիստական առակը:

Ինչո՞ւ շովինիստական:

Ուրեմն դո՞ւ ես գրել:

Ես: Իսկ ի՞նչ:

Այնտեղ գազան է հիշատակվում:

Հիշատակվում է:

Այդ ի՞նչ է ստացվում: Ստացվում է, որ Էստոնացին գազա՞ն է: Ես գազա՞ն եմ:
Ես՝ կուսակցության Կենտրոնական Կոմիտեի հրահանգիչս, գազա՞ն եմ:

Ախր դա հեքիաթ է, պայմանականություն: Այնտեղ նկարագարում կա:
Երեխաները հանդիպել են արջին: Արջը բարի ու համակրելի դեմք ունի: Նա
դրական կերպար է...

Իսկ ինչո՞ւ է Էստոններեն խոսում: Թող խոսի կապիտալիստական երկրներից
մեկի լեզվով...

Չհասկացա:

Քեզ բացատրելն անօգուտ է: Դու դեռ խակ ես կուսակցական թերթի համար,
խակ...

Մեկ ժամ անց մտավ խմբագիրը .

Ժյուրին ձեզ տուգանում է երկու միավորով:

Ի՞նչ ժյուրի:

Դուք մոռացել եք, որ սրցույթը շարունակվում է: Լավագույն նյութերի
հեղինակները պարզեւատրվելու են: Լավագույններից լավագույնը կարժանանա
ուղեորության դեպի Արեւմուտք՝ Գ-ԴՀ: Տրամաբանական է: Իսկ
վատագույններից վատագույնը՝ դեպի Արեւե՞լք:

Ի՞նչ եք ուզում ասել:

Ոչինչ: Կատակեցի: Գ-Դ-Հ-ն Արեւմո՞ւտք է:

Իսկ ձեր կարծիքով ի՞նչ է:

Արեւմուտքը Ճապոնիան է:

Ի՞նչ, վախեցած վեր թռավ Տուրոնոկը:

Գաղափարական առումով, ավելացրի:

Խմբագրի դեմքը մռայլվեց անսահման հոգնածության ստվերով:

Դովլաթով, ասաց նա, ձեզ հետ անհնար է խոսել: Հիշեք, իմ համբերությունը սահմաններ ունի...